Հաստատում եմ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«06» դեկտեմբերի 2023թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

Ի9.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Տիգրան Սամվելի Հարությունյանի **«Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատվել է

Հայ-Ռուսական համալսարանի «Քաղաքագիտություն» ամբիոնի 2023թ դեկտեմբերի 6-ի նիստում: Նիստում մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Սարգսյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու Ս.Ս. Շիրխանյանը, ավագ դասախոսներ Մ.Լ. Հարությունյանը, Ն.Ի.Մարգարյանը, դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Զինված ուժերի կառուցման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն, սեփական զինուժի ստեղծմանը ձեռնամուխ լինելով, նախապես ընտրում է դրանց այն կառուցվածքը, որով կերաշխավորվի տվյալ պետության անվտանգությունը: Նշված գործընթացը փոխկապված ու փոխպայմանավորված տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական, ռազմատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համակարգ է, որը

նպատակաուղղված է ազգային շահերի պաշտպանությանը երաշխավորված զինված ուժերի ստեղծմանը, պատրաստմանն ու շարունակական զարգացմանը: Այն իրագործվում է պետության ամբողջ ռազմական կազմակերպվածքի փուլային համալիր կերպափոխմանը համահունչ՝ պետության ռազմական գործունեության ընդհանուր համակարգի շրջանակներում:

Միջազգային և տարածաշրջանային անվտանգային ճարտարապետությունը գտնվելով կերպափոխումների և ցնցումների փուլում անմիջականորեն ապակայունացնող ազդեցություն է գործում, մասնավորապես, Հարավային Կովկասի առանց այն էլ բարդ և հակասական անվտանգային միջավայրի վրա: Ուստի հրամայական է միջնաժամկետ հեռանկարում կանխատեսվող զարգացումների, ռազմարվեստում ու ռազմական գիտության մեջ կատարվող ինտենսիվ փոփոխությունների հաշվառմամբ կառուցել մերօրյա մարտահրավերներին դիմադրունակ, համապատասխան կարողություններ, հմտություններ ունեցող և արագ արձագանքման ունակ ազգային պաշտպանական համակարգ: Այդ առումով ատենախոսությունում ներկայացվում և հիմնավորվում է ներկայիս միջազգային և տարածաշրջանային ռազմական սպառնալիքների փոխկապվածության պայմաններում պատերազմի վարման եղանակների շարունակական փոփոխումն ու կատարելագործումը: Այն ենթադրում է կողմերի միջև սովորելու, հարմարվելու, անդադար փոփոխությունների գնալու դինամիկ մրցակցություն, ինչը ձևավորում է պաշտպանության բնագավառի շարունակական բարեփոխումների պահանջ:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի բարեփոխումների գործընթացի շրջանակներում ի հայտ եկող խնդիրները համալիր լուծումների կարիք ունեն, որի համար առաջնային է դառնում ողջ կառավարման համակարգի և զինված ուժերի ղեկավարման բոլոր օղակների աշխատանքների սինխրոնիզացումը և պաշտպանական կառույցի հիմնարար վերափոխումը՝ առաջնորդվելով կարողությունների վրա հիմնված մոտեցմամբ: Գործընթացը հիմնականում ներառելու է կազմակերպական կառուցվածքի, մարդկային կապիտալի, ռազմական հայեցակարգերի կրթության, ինչպես նաև տեխնոլոգիաների ոլորտները: Նշված մոտեցման չկիրառման, կամ ոչ ամբողջական/իմիտացիոն կիրառման դեպքում,

ըստ ատենախոսի ամբողջապես արգելակվելու է պաշտպանության բնագավառի զարգացումը՝ իր ողջ բացասական հետևանքներով:

Նշվածի հաշվառմամբ էլ ընդգծվում է Տիգրան Հարությունյանի կողմից ներկայացված թեկնածուական ատենախոսության արդիականությունը և գիտական հետազոտության հիմնավորվածությունը:

Ատենախոսության հիմնական նպատակն է՝ հետազոտել ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների էությունը, դերն ու նշանակությունն ազգային անվտանգության ապահովման համատեքստում, գիտական և վերլուծական տեսանկյունից գնահատել բարեփոխումների արդյունավետությունը և շարունակականության ապահովումը համակարգի զարգացման գործում, նախանշել և առաջարկներ ներկայացնել բարեփոխումների շրջանակի հետագա ընդլայնման, ինչպես նաև անվտանգային նոր միջավայրին համահունչ ՀՀ պաշտպանական նոր համակարգի ձևավորման համար:

Աշխատանքում գիտական նորույթը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ու ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում պաշտպանական բարեփոխումների իրավաքաղաքական գործընթացի համապարփակ ու համալիր վերլուծությունը, գնահատվել և հետազոտվել են ավելի լայն առումով անվտանգային ոլորտի կառուցակարգերի վերափոխումները, որոնք ՀՀ անվտանգային նոր իրողություններում կարող են հիմք հանդիսանալ բնագավառի հեռանկարային զարգացման համար: Ատենախոսի կողմից բնորոշվել և գնահատվել է պաշտպանական բարեփոխումների ընթացքը՝ հիմնավորելով և նախանշելով նոր իրողություններին դրանց համապատասխանեցման միտումները և ներկայացվել առաջարկություններ հեռանկարային ուղենիշերի վերաբերյալ: Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության բնագավառի շարունակական զարգացման համատեքստում հիմնավորվել է, որ ՀՀ պաշտպանության ապահովման համակարգը ռեֆլեկտոր կերպով արձագանքելով սպառնալիքներին և մարտահրավերներին պետք է ունենա նաև դրանց կանխատեսման, ինչպես նաև սպառնալիքները կանխելու ու կասեցնելու համար ժամանակին միջոցառումներ ձեռնարկելու կարողություն: Ատենախոսը հիմնավորել է, որ ՀՀ զինված ուժերում վերջին տասնամյակների ընթացքում իրականացված խորքային

բարեփոխումները չեն կրել համակարգային բնույթ և որոշակի ժամանակահատվածից դադարել են ընթանալ համադասված ինչպես ամբողջ զինված ուժերի, այնպես էլ ընդհանուր առմամբ պաշտպանության բնագավառի զարգացման համար:

Ներկայացված ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է հետազոտության նպատակով և խնդիրներով: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ յոթը ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Բովանդակությունը բխում է ատենախոսությունում դրված գիտական նպատակներից և խնդիրներից, ներածությունում հիմնավորված է թեմայի ընտրությունն ու արդիականությունը, գիտական նորույթը:

Առաջին գլուխը վերնագրված է «Պաշտպանության բնագավառի բարեփոխումները հետխորհրդային պետությունների պետական կառավարման բարեփոխումների համատեքստում» վերնագրով և բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «Պետական կառավարման կերպափոխումը հետխորհրդային ժամանակաշրջանում» ենթագլխում համառոտ ներկայացվում են հետխորհրդային ժամանակաշրջանում պետական կառավարման կերպափոխման գործընթացի առանձնահատկությունները, վերլուծվում են նոր ձևավորվող պետական կառավարման ինստիտուտի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվող տեսակետները և մոտեցումները: Երկրորդ՝ «Պաշտպանության բնագավառի դերն ու նշանակությունը հետխորհրդային պետությունների պետական կառավարման մեջ» ենթագլխում, քննարկվում են հետխորհրդային պետությունների, մասնավորապես՝ Վրաստանի և Ուկրաինայի պաշտպանության ոլորտներում իրականացված բարեփոխումները, հետագա գործընթացները, զարգացումներն ու հիմնական արդյունքները և համեմատականները ՀՀ-ում իրականացված նմանատիպ գործընթացի հետ: Երրորդ՝ «Պաշտպանության բնագավառի բարեփոխումների էության վրա ազդող հիմնական գործոնները» վերնագրով ենթագլխում ներկայացվում են բնագավառի բարեփոխումների արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները տարատեսակ մոդելների և մոտեցումների կիրառման համատեքստում:

Երկրորդ գլխում՝ «Ոլորտային բարեփոխումները ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառում» վերտառությամբ, վերլուծվում է ՀՀ պաշտպանության

և անվտանգության բնագավառներում իրականացված բարեփոխումների նպատակը, էությունը, հիմնական նվաճումները և բացթողումները: Առաջին՝«Պաշտպանության բնագավառի ոլորտային բարեփոխումները համապետական պաշտպանունակության ապահովման գործում» ենթագլխում քննարկվում են ՀՀ զինված ուժերի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը, զարգացման հիմնական փուլերը և ոլորտային բարեփոխումները: Երկրորդ՝ «ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների նպատակա-ուղղվածության, արդյունավետության և շարունակականության ապահովման հիմնական հայեցակետերը» վերնագրով ենթագլխում վերլուծվում են պաշտպանության բնագավառի բարեփոխումների շրջանակներում հայեցակարգային մոտեցումների կիրառումը, պաշտպանական ծախսերի, ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, պաշտպանական քաղաքականության և պլանավորման մշակույթի ներդրման գործընթացները:

Երրորդ գլխում՝ «Պետության շուրջ ձեվավորված անվտանգային միջավայրի և դրա փոփոխման դինամիկայի պայմաններում ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունները» վերտառությամբ, քննարկվում են միջազգային և տարածաշրջանային զարգացումների համատեքստում պաշտպանության բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները: Առաջին՝ «ՀՀ շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի և արտաքին անվտանգային հիմնական սպառնալիքների գնահատումը» վերնագրով ենթագլխում վերլուծվում և գնահատվում է անվտանգային միջավայրը, քաղված դասերի համատեքստում առաջարկվում ՀՀ ԶՈՒ արդիականացման հիմնական ուղղությունները և մոտեցումները: Երկրորդ՝ «Պաշտպանության բնագավառում շարունակական բարեփոխումների նշանակությունը համակարգի արդիականացման գործում» վերնագրով ենթագլխում ներկայացվում է պաշտպանության բնագավառում ոլորտային բարեփոխումների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը և ոլորտային զարգացման հիմնական միտումները:

Ներկայացված հետազոտությամբ ատենախոսը քաղաքագիտական և իրավագիտական հետազոտությունների խաչասերմամբ բացահայտել է պաշտպանության բնագավառում իրականացված ոլորտային բարեփոխումների մոտեցումները, վերջիններիս դերը ՀՀ անվտանգության համակարգում, ուսումնասիրել բնագավառի շարունակական բարեփոխումների արտերկրի փորձը, ինչպես նաև

վերլուծել արդի ժամանակաշրջանում ՀՀ զինված ուժերի վերափոխման համար անհրաժեշտ հիմնահարցերը: Իրականացրած համալիր գիտավերլուծական աշխատանքի շնորհիվ հեղինակը յուրովի է բնորոշել պաշտպանության բնագավառում իրականացված բարեփոխումները, ինչպես նաև բացահայտել է բնագավառի ոլորտային բարեփոխումների շարունակականության կարևորությունը երկրի ազգային անվտանգության ապահովման գործում:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է դրա հիմնական դրույթների պահանջվող արտացոլումը: Ստացված արդյունքները հեղինակի կողմից ներկայացված են իր 6 գիտական հոդվածներում, որոնք արտացոլում են ատենախոսության բովանդակությունն ու հիմնադրույթները:

Թվարկված դրական կողմերի հետ մեկտեղ ներկայացված աշխատանքում առկա են որոշ թերություններ և բացթողումներ, մասնավորապես.

1. "Թեմայի մշակվածության աստիճանը" բաժինը չի համապատասխանում ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես, դրանում հեղինակը չի նշում գեթ մեկ հեղինակի անուն, չի բերում որևէ հղում՝ սահմանափակվելով "տարաբնույթ ուսումնասիրություններ", "առաջատար գիտնականներ և փորձագետներ" և նման այլ՝ հստակ չափում չունեցող արտահայտություններով, որոնք թույլ չեն տալիս գնահատել ներկայացված թեմայի մշակվածության աստիճանը: Ավելին, նույն բաժնում հեղինակը որպես հետազոտության հիմք է ներկայացնում նաև քաղաքական-իրավական փաստաթղթերը՝ կոնվենցիաները, հռչակագրերը, ՀՀ հայեցակարգային փաստաթղթերը, ինչը չի կարող աղերս ունենալ թեմայի մշակվածության աստիճանի հետ:
2. Հետազոտության օբյեկտն ու առարկան հստակ չեն ձևակերպված և որոշակի առումով խնդրահայրույց են գիտականության տեսանկյունից: Որպես օբյեկտ ատենախոսը ներկայացնում է պաշտպանության բնագավառի բարեփոխման հիմնական ուղղությունների և Հայաստանի Հանրապետությունում ընթացող անվտանգային ու ռազմաքաղաքական գործընթացներում դրանց արտացոլման վերլուծությունը: Մինչդեռ օբյեկտը առկա է հետազոտողից զատ և պայմանավորված չէ վերջինիս գիտական նախասիրություններով: Հետևաբար, որևէ բանի

վերլուծություն չի կարող հետազոտության օբյեկտ հանդիսանալ: Միաժամանակ, հստակ չէ օբյեկտի ու առարկայի միջև ընդհանուր-մասնավոր անցումը: Այսպես, որպես առարկա հեղինակը նշում է պաշտպանության բնագավառի բարեփոխման ուսումնասիրումը՝ որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության որոլտի կարևորագույն բաղադրիչ: Ստացվում է, որ հետազոտության առարկան ոչ թե առանձնացնում է ընտրված օբյեկտի այս կամ այն առանձնահատկությունը կամ որակը, այլ իր բովանդակությամբ պարզապես կրկնում է այն, ինչը ներկայացված է որպես օբյեկտ:

3. Առանձին դեպքերում ատենախոսը անում է պնդումներ, որոնք հստակեցում և օրինակներ են պահանջում: Այսպես, խոսելով պաշտպանական բարեփոխումների մասին՝ նա պնդում է, որ "ՀՀ ԶՈՒ համար առավել հետաքրքրական էին արևմտյան մոդելը և փորձը" (էջ 58): Շարադրանքից պարզ չի դառնում, թե ինչով է այմանավորված այդ հետաքրքրականությունը: Ավելին՝ ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը բերեր տվյալ դրույթը հիմնավորող որոշ փաստեր՝ արտացոլված ռազմավարական փաստաթղթերում կամ գոնե պաշտոնական հայտարարություններում: Առանց նման հիմնավորման տվյալ պնդումը հրապարակախոսական բնույթ է կրում:
4. Ատենախոսության առանձին ծավալուն հատվածներում (էջ 44-52, 90-101) գրեթե բացակայում են հղումներ:
5. Գրականության ցանկի "Մասնագիտական գրականություն և հրապարակումներ" բաժնում առկա են հղումներ ԶԼՄ-ներում ու տարբեր գերատեսչությունների կայքէջերում տեղ գտած հրապարակումների վրա: Վերջիններս պետք է ներկայացվեն առանձին ցանկով՝ որպես հետազոտության էմպիրիկ բազա, այլ ոչ թե ներառվեն մասնագիտական գրականության ցանկի մեջ:

Այդուհանդերձ, մասնագիտական գրականության, պաշտոնական հրապարակումների և համացանցային տեղեկատվության վերլուծության հիման վրա ատենախոսը կատարել է աշխատանքում դրված նպատակներն ու խնդիրները: Ատենախոսությունում տրվող եզրակացությունները տեսական և գործնական բնույթի են, կատարված առաջարկություններն ունեն կիրառական նշանակություն:

Արդյունքում կարելի է փաստել, որ Տիգրան Հարությունյանի ատենախոսությունը առանձնանում է հետազոտությամբ բարձրացվող խնդիրների ուսումնասիրության արդիականությամբ, բազմակողմանիությամբ և ստացված գիտական արդյունքների տեսական և գործնական նշանակությամբ, այն տրամաբանորեն կառուցված հեղինակային ինքնուրույն հետազոտություն է: Ներկայացված ատենախությունը արժևորվում է նաև ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների արդյունավետության գնահատման և համակարգի զարգացման գործում շարունակականության ապահովման տեսանկյունից՝ նախանշելով և առաջարկներ ներկայացնելով բարեփոխումների շրջանակի հետագա ընդլայնման, ինչպես նաև անվտանգային նոր միջավայրին համահունչ ՀՀ պաշտպանական նոր համակարգի ձևավորման համար:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու իրականացված հետազոտական աշխատանքը, վերջնարդյունք եզրահանգումները և առաջարկությունները՝ գտնում ենք, որ Տիգրան Սամվելի Հարությունյանի քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների արդիականացման հիմնախնդիրը ազգային անվտանգության համատեքստում» թեմայով ատենախոսությունը բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ /Հ. Լ. Սարգսյան/

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Լ. Սարգսյանի
ստորագրությունը հաստատում եմ
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա